

Տարեկան գինը՝ 7 լութէ, կէս տարվանը՝ 4 լութէ:

Թիֆլիսում՝ գրվում են Խմբագրատանը, պլ. Ծառուրեանի և
Արարիանեանի խանութում

Ошарашаңыраштырғанда қариматтам են таңылағы
Тифлис. Редакция „Макет“

„Մշակ“

Ծախվում է առանձին համարներով, հատկապես բացի լուրջի գործություններում՝ ԾԱ.ՏՈՒՄԵԱՆԻՑ լամպերի գաղինում (Հաբուրովի տանը), Զ. ԳՐԻՎԵԱՆՑԻ գրավաճառուցում (Կամուրջի և ԳՐԻԳՈԼՈՎԻ մազափինում (Միրզօնիի տերեւանեան հրապարակի վրա) և ՍԱ.ԲԱ.ՖԵՆԾԻ ծխախոտի խանութում (Մարտիկի տանը),

60115-201100b@bbh1

Հայաստանի միացնելը, — Ն երքին տեսութիւն, Պատերազմական բեմից, Նամակ Շուշոց, Ներքին լուրեր, — Արտաքին տեսութիւն, Պատերազմ և մոլեռանգութիւն, Արտաքին լուրեր, — Խառն լուր եր, — Յայտարարութիւններ, — Տեղեկացոյց, — Բանապահական տպաւրութիւնները,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՆԵԼԸ

Ղարսի վեր առնելը վճռողական րօպէ է ներկայ պատերազմի մէջ, գոնէ ասիական պատերազմական բեմի վրա: Ղարս մեր ձեռքն ընկնելով Երզըումն էլ շուտով պէտք է ընկնի: Մի անհան գարնիզօն Ղարսի մէջ թողնելուց յետոյ, ոռւսաց ամբողջ բանակը ազատ կը լինի և գօրքի բո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՒԹԱԿԱՆ ՏՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԱՇՏՈՒՄ

Ուսանողի փակված կեանքը մի նեղ սեսեա-
կում, նորա մի և նոյն դասական գրեանքը (մա-
նաւանդ եթէ զրանց մէջ լինեն Յ. Կեսարի, Տ.
Լիփոսի և այլ սրանց նման լատինական հիդր-
նակների գրվածները) վերջապէս ձանձրացնում
են մարդու Անընդհատ աշխատութիւնը և մի և
չորս ժամանակ ամեն ուսականութիւններին

սոյն ժամանակ ասսու բաւագառություններց
զուրկ լինելը խլում են աշակերտից նորա թէ փի-
զիկական և թէ մտաւոր ոյժերը, Ֆիզիկական
կողմից նա նիհարանում, լզարում է. մտաւոր
կողմից, միտքը միշտ լարված լինելով, վերջա-
պէս հոգնում է, դադարում է գործելուց: Այս
հանդամանքները աչքի առաջ ունենալով և մա-
սամբ ամառվայ անգործութեանս պատճառով,
ես վճռեցի թիֆլիսի տօմիից ազատվել ու գնալ
հայրենիքս, Երևան, վերանորոգելու իմ ոյժերս և
հաւաքելու նորանոր տպաւորութիւններ: Ամենքը
սիրում են իրանց հայրենիքը. այդ բնութեան
օրէնք է, իսկ ես առաւել ևս սէր և ձգտումն
եմ զգում դէպի Երևանը, որ թողել է իմ մէջ
մանկական անմեղ ու քաղցր օրերի շատ ու շատ
տպաւորութիւններ: Միայն ափսոս, որ այս ան-
գամ, երբ մանկական հասակիցս երիտասարդա-
կան հասակի փոխված վերադարձայ իմ ծննդեան
տեղին, աւելի լաւ տպաւորութիւններ չը կա-
րացի դուրս բերել Երևանից, Երևանը թէս մի
նահանգական քաղաք է, բայց կովկասի յետքն-
կած քաղաքներից մինը կարելի է հաշւել: Պատ-
ճառներ մի քանիսը կան նորան այդ դրութիւ-
նից հանելու համար, որոնցից մինը մենք տես-
նում ենք երկաթուղու գծի մէջ, եթէ ժամանա-
կով, ինչպէս կարծվում է, արժանանար Երևանը
այդ բարիքին: Մի կողմը թողնելով քաղաքային

լոր ոյժերը կարող են այժ
տրօնանալ Երգըսումի մօտ:

Եսկ Եշրջում մեր ձեռքն ընկ
նելով, ամբողջ Հայաստանն է
Որուստաստանի ձեռքը կընկի
որովհետեւ Եշրջումից յետոյ էլ
մի բերդ չը կայ, որ կարողանա
ընդդիմադրութիւն անել զօրքե
րին:

Ուրեմն ասիական պատերազմական բեմի վրա պատերազմ շուտով վերջացած կարելի կը լին չամարել:

Եյժմ ոռւսաց լրագիրները յարուցանում են այն միտքը թշայաստանը պէտք է միացնեն Անդրկովկասին, որպէս միակ միջոց Ռուսաստանի համար իր կրթած պատերազմական վասաներին և ծախսերին փոխարէն վարձատր ված լինելու։ Եւ ճշմարիտ յաղթված թիւրքիան միջոց չուն

վողով վճարել Ռուսաստանի
նորա պատերազմական ծախսերը
որովհետև յայտնի է որբան ան-
նախանձելի դրութեան մէջ ե-
թիւրբաց Փինանսները....

Ուուսաստանը կարող է, ուրեմն
միայն հողով իր վարձատրութիւնը
պահանջել:

‘Սորերումս ռուսաց «С. Պե-
տերճ. ԲՖԴ.» լրագիրը դրելէ այն
չարցը որ եթէ Ուռուսաստանը շ
միացնէ իրան Հայաստանը, հա-
յերը ինչ պէտք է անեն: Թիւր-
քիայի հայերը, ասումէ լրագիրը
չեն կարող դեռ ևս ցոյց տալ մեզ
կատարեալ համակրութիւն, որով-
չետեւ չը գիտեն պատերազմի հե-
տևանքը ինչ կը լինի՝ ա՞րդեօք
Հայաստանը կը միանայ Ուռ-
սաստանին, կամ կրկին կը մնայ
թիւրքերի ձեռքին: Եյլ պատ-
ճառով Հայաստանի հայերը առ-
ժամանակ անտարբեր են ցոյց տա-
լիս իրանց և պէտք է իրանց ան-
տարբեր ցոյց տան ինչպէս դեպէ
Թիւրքիա, այնպէս էլ դէպի Ուռ-
սաստանը:

Մեսք զիտենը արդէն որքան
թանդ նստեց նորերումն Ալաշ-
կերտի և Բայազէտի Հայերին նոցա-
դէպի Ռուսաստանը ունեցած հա-
մակրութիւնը:

Եթէ Հայաստանը կը միանայ
Ոռուսաստանին, մի քանի տարուց
յետոյ երկիրը կը լինի ծաղկած
դրութեան մէջ, Հայաստանի այն
վիճակները, որոնք գրեթէ էլ հա-
յերով բնակեցրած չէին վերջին
ժամանակները, նորից կը լցվեն
Հայերով։ Ազգաբնակութիւնը այն-
պէս խիտ կը դառնայ, ինչպէս որ
խիտ դարձաւ Երևանեան նա-
շանգում, այդ երկիրը Ոռուսա-
ստանից նուածված լինելուց յետոյ։
Բացի սորանից Հայաստանը Ոռու-
ստանին միանալով՝ մահմետա-
կան Հայերից շատերը խկոյն կը
վերադառնան դէպի Հայոց կրօնը,
ուրեմն և դէպի Հայոց ազգու-
թիւնը, իսկ Հայոց ուսումնարան-
ները բազմանալով և Հաստատ
հիմք ստանալով, ինչպէս որ Հաս-
տատ հիմք ստացան և բազմացան
Անդրկովկասում, կը թողական աղ-
դեցութիւն կունենան շրջապատող
փոքր ազգութիւնների վրա՝ ասօ-
րիների, եղեղիների և որիների
վրա։

Հացի սորանից | Իռուսաստանը

դէպի օրիորդական դպրոցը, Նարանց սառնասր տութեան ու անտարբերութեան հետեանքը այ բազէիս երկսեռ ուսումնարանների ոգորմել զրութիւնն է ու դրամագլխի պակասութիւնը Այս է պատճառը ահա որ չը նայելով մի քանի երիտասարդների եռանդին ու անձնանութիւն թեանը, հոգեորդ-դպրոցը 10—15 տարի ոչին ակնյայտնի արդիւնք ցոյց չը տուեց, օրիորդական դպրոցը փոխանակ առաջ զնալու յետ ընկաւ, Գանք ուրիշ հասարակական հիմնարկութիւններին՝ 10—12 հազար ընակիցների մէջ մթատրօն, մի ընթերցարան գոյութիւն չէ ունենում, Տասը տարի է արդէն և գուցէ աւելի, որ Երեան քաղաքը բաղդ ունեցաւ առաջին անգամ ներկայացումներ տեսնելու, բայց երկան չը քաջեց, անհետացաւ թատրօնի գաղափարը երեանցիների միջից։ Հենց 76 թուականի խեղե երիտասարդների աշխատութեամբ եղած «Ուեպօի» ներկայացումը ցոյց տուեց, որ ժողովուրդը ամեննեին հարկաւորութիւն չէ զգութատրօնի մէջ։ Ընթերցարանը մի քանի տար դադարելուց յետոյ, գարձեալ բացվեցաւ, երես քաղաքացիների մտաւոր զարգացման չափը ձանաչելու համար, բայց նորա մէջ ժողովրդի ամիսներով ամեննեին ընթերցող չէք գտնի բացի մի քանի երիտասարդներից։ Այսպիսս ընթերցարանը առաջ կերթայ, յարատեսն կունենայ։ Ո՞չ Բացի ժողովրդի սառնամարտութեանից ու անտարբերութեանից դէպի թատրօնի ընթերուառանի որոնք, աւտահիս հիմ

Նարկութիւնների պատճառ եղող երիտասարդ
ները ուրիշ արգելքների էլ ևն հանդիպում. Այ
արգելքը շատերի նախանձն է զէպի որ և
մէկի ոկտած զործը՝ քանդել փոխանակ շինելո
համոզել ուրիշին հրաժարվել մի բանից, քա
թէ իրան ևս մասնակցել այն բանում, որ առան
իրան է ոկտած և համարեա զլուխ բերած. ահա
մի ուրիշ յատկութիւնը իմ քաղաքակիցներին
ինչպէս կամենում էք, հայրենակիցներ, միայ
սա պատիւ չէ բերում մի ժողովրդի.

մի մեծ բարերարութիւն արած
կը լիսի Հայաստանին, եթէ կը
մտցնէ այնտեղ տեղական հայերից
կազմված, լաւ կազմակերպված
միլիցիա, որով հայերը իրանք կա-
րող եին իրանց անձը պաշտպա-
նել զանազան քուրդերի և ուրիշ
աւազակ թափառական ցեղերի
դէմքն ու ու ու

Եյդ միլեցիան օգուտ կը բե-
րեր հայերին թէ այն ժամանակ
եթէ Հայաստանը մնար ոտևների
ձեռքին, Ա թէ այն ժամանակ
եթէ (ինչ որ չենք կարծում) կը-
կին անցնէր Թիւրքիայի իշխա-
նութեան տակ:

q. u.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒ

Հոկտեմբերի 30-ի

Կիրակի, նոյեմբերի 6-ին թնդանօթների
հարիւր և մի անգամ արձակելը իմացրեց
և որ մեր զօրքերը Դարս վեր առան-
ձրեկցեան նոյն օրվայ Հրատարակվեցաւ Հե-
ռեւեալ հեռագիրը տեղական ուսու լրագիր-
երի թղթակիցներից ուղարկված։ Ու երան-
ալէից, նոյեմբերի 6-ին հեռագրում են՝
յսօր ինն ժամին առաւօտեան մեր զօրքերը
տուրմով վեր առան Դարս գարնիգօնը գցեց
և ընթիւն մարտկոցը Տախմաս-Թաբիէ և փախաւ
լոտի ուղղութեամբ։ Մեր զօրքերը հետեւում
ն այդ փախչողներին։ Մեր ձեռքը ընկան
ատ գերիներ, թնդանօթներ, գէնքեր և
համփուշներ։ Մի ուրիշ հեռագիր հաղոր-
ում էր՝ աղարսի շոտերմը սկսվեցաւ ժամը

*) Արարատի այդ զիրքն է պատճառը, որ
այդ դաշտի զիւղերի բնակիչները, աշխարհիս
չորս կողմը որոշելիս ասում են՝ արևելք, արև-
մուտք, հիւսիս, Մասիս:

իննին առաւօտեան. երկու ժամին վեր առած
էին Դարսի Խավիս-փաշա, Քանդի և Սուր-
վարի ամրացած գիլբերը. Կօմն Գրաբբէ սր-
պանված էր — Միւս օրը հրատարակվեցա-
պաշտօնական հեռագիրը հետեւեալ բովան-
դակութեան՝ «Պ. երան-Քալէ, նոյեմբերը
6-ին: Այսօր Դարս շտուրմով վեր առած է
Ճակատամարտը սկսվեցաւ երեկոյեան 8 ժա-
մին և վերջացաւ 8 ժամին առաւօտեան
Մեր աւարը և մեր կորուստները գեռ ճզու-
թեամբ յայտնի չեն»:

Դարձեալ առաջնորդարանի ալիքները ծեծում
են մեր ուսումնարանի պատերը։ Ամսոյս քսան
և չորսին դեռ ևս նոր արեգակի ոսկեղոծ ճառա-
գայթները ակսել էին տաքացնել ուսումնարանի
կտուցը, ամեն կողմից տեսնվում էին ժողովրդից
կազմված բազմաթիւ խումբեր, որոնք գնում
էին դէպի թեմական Գլորոցը։ Ես ինքու ակամայ
հետեւելով այդ խումբերից մէկին ներս մտայ
ուսումնարանի դահլիճը։ Ի՞նչ տեսայ, հարիւրից
աւելի աթոռների գրա բազմած էին Շուշու-
քաղաքի ընտրեալ մասի անդամները, որոնք
ամենամեծ ուշադրութեամբ լսում էին տեսչի
վասակ Պապաջանեանի բողոքները ուսում-
նարանի գտանգաւոր զրութեան մէջ գտնվելու
մասին։ Ժողովուրդը ուսումնարանի վերաբե-
րութեամբ նորա կարճառօտ տեղեկութիւնն-
երը և Շանչեանի ու Խորենի պատմութիւնը
իրանց ձիչա բացատրութիւններով լսելոց յե-
տոյ, այն աստիճանի զայրացած և վրդոված
արարձացաւ տեղից, մէկը միւսին հրաւիրելով
դնալ իսկոյն առաջնորդարանը և պահանջել
լարդապետից, որ նա իսկոյն թողնէ Շուշի,
դրանով գախճան տալով այս արդէն մի քանի
ամիս քաղաքը հիմն ի վեր տապալով կռւսակ-
ցութեանց և այն է պէտք է վճռվէր զործը, —
այց մի քանի անձինքներ խնդրեցին թողու-
դնալ միայն մի քանի անձանց պահանջել այդ
ալեկոծութեանց և վրդովմանց պատճառ եղա-
լից հաշիւ և ստիպել առանց իւր անձնա-
ան պատիւ նուազութեան, թողուլ քաղաքը
գիմել իւր հայրենիքը…… Բայց զարմանալին

այն էր, որ այդ անձինք փոխանակ քաջութեամբ և մի խօսքով վեջացնելու, համաձայն նել էին վարդապետի խնդրին ներկայանալ զի շերվայ հոգաբարձական ժողովին, որտեղ նա առաջարկելով տեսչին քանի մի ուսումնարան վերաբերութեամբ իբր թէ տարակուսելի հարցեր, եթէ բաւականացուցիչ և լրացուցիչ պատասխան ստանար ի դիմաց ժողովրդի, պէտք է համաձայնէր կատարելու ժողովուրդի կամքը բայց ինչ, երեկոյեան հինգ ժամին, երբ որ ժողովուրդը, հիմնվելով մի վարդապետի խօսքի վրա ժողոված ուսումնարանի դահճճում սպասուէր, մարդ եկաւ վարոսակեալու, առ կո ինոնուէ

թէ սենեակը ցուրտ է, ուստի չէ կարող ներկայանալ խառն ժողովին: Բազմութիւնը ստանալով վարդապետից այսպիսի մի անակնկապատասխան, գիմնեց տեսչին հանդերձ ուսուցիչներով գնալ նրա մօտ և երես առ երես ասել վարդապետի պահանջնում գնալ վարդապետ մօտ, բայց քանի մի ուսուցիչք կարծելով, որ գուցէ այդ բազմութիւնը ուրիշ մեկնութիւններ տայ այդ ըստ գալու համար, խնդրեցին նոյնպէ բազմութեան հետ առանձին թախանձանով տեսչին գնալ և այն իրը թէ տարակուսելի հարցերին բազմութեան առջև պատասխանել: Վերջապէս տեսուչը յարգելով բազմութեան և ուսուցչաց խնդիրը, համաձայնեց գիտալ առաջնորդարանը, որտեղ ժողովվեցաւ բացի հոգաբարձուներից և խուռն բազմութիւնը: Ես ինքառ չէի կամենում մասնակից լինել մի վարդապետի և տեսչի անբաւականութեանց խովութեանց, ակամայ հետեւցի այդ բազմութեանը գէպի առաջնորդարանի դահլիճը բայց ինչ տեսայ, երբ առաջնորդարանի դուռը բացվեցաւ: Սօֆայի վրա, որ զրած էր զահլիճի ճակատում այս և այն կողմը բազկաթուներով շարած, նստած էր մի դուռնաթափ և համարեա սեացած մի մարդ կամրջավկան գլխին և վարդապետական տէր-ողորմեան ձեռքին Տեսուչը հոգաբարձուաց անդամոց հետ նըստած էին բազկաթուների վրա, իսկ խուռն բազմութիւնը որը ստրի վրա կանգնած և որը միւս աթոռների վրա նստած, անհամբեր սպասում էին այդ երկու անձանց խօսակցութեանը, որից կախ էր մեր խեղճ ազգային դպրոցի վիճակը: Առաջնորդի փախանորդը, որ պէտք է հարցեր առաջարկեր տեսչին պահանջելով լուծումն, ժողովրդին և մեծ մասին քանի մի հոգաբարձութեան անհամականալի բառեր և խօսքեր այս կողմը ծամծելով, վերջապէս առաջարկեց, թէ՝ «գուք, պարոն տեսուչ առանց դիտութիւն

Հետ զուգնթացաբար կարելի էր աւանդել միքանի գիւղացու համար անհրաժեշտ մաքեր, թէ ինչպէս պէտք է թեթևայնել գիւղական աշխատանքի միջոցները, ինչպէս պէտք է խնամել հողը և այլն: Կարելի էր աշակերտներին հաղորդել մինչեւ անդամ՝ բժշկականութենից մի քանի ամենահարկաւոր գիւղելիքները, ընտանեկան անսառնների պահպանութեան համար նախագործութիւններ և ուրիշ այլ տեսակ մաքեր, որոնք գիւղացու անտեսութեան օգտին կառող էին ծառայել: Այդ տասումնարանը որովհեած առանց նուիրատւութեան գլուխ բերել անհնարին է, այս պատճառով հարկաւոր է զիմել օգնութեան համար հարուստ գիւղացիներին, քեօխիլաներին և առհասակ գիւղերում ձայն ունեցող անձննքներին, որոնց ամեն ընը սկզբից հարիւր մանէթ նուիրելով կը բարտաւորվէր այնուհետև տարին այլ ևս վեց մանէթ աւելացնել իր նուերքի վրա: Բայց այս ուիրատւութիւնները հաւաքելու գործում ող աւելի ոյժ, նշանակութիւն, ներգործութիւն կունենար գիւղական հասարակութեան վրա, եթէ նէ Երեսնի վիճակաւոր առաջնորդը, որ հրափանաց թղթով կը կանչէր իրան մօտ գիւղերից ում զիտէր և կը խնդրէր օդնել նուիրատւութեամբ ուսումնարանական գործին: Խնչ կարգիք, որ ուսումնարանի բարելաւութիւնը կախված կը լինի նուիրատուների քանակութենից, որ կարող է մեծացնել մեր հոգեսոր հայերի միամտութիւնը: Ուսումնարանը հիմնելով, պէտք մտածել նրա մէջ ուսանող աշակերտների մայն: Որովհետեւ գիւղացու շատ ծանր է աշխատութ ձեռքի պահատութիւնը և ուրեմն նա դժուար է համաձայնի հէնց այլ պատճառով որդուն ըսումնարան տալ, պէտք է ընդունել զիմանապէս հարուստ գիւղականների և քանանաերի որդիքներին, որոնք այնքան հարկաւոր չեն ամարիլի ընտանեկան գործերում: Որքա կը լին զիշերութիւններ, որոնց թիւը կը համար 20-ից չափելու և ուսանելու համար համար կը ուղարկ

ուսումնաբան ու հօր կալուածների բերքերից իր
տարեկան ապրուստի համար մի որոշ քանակու-
թիւն, Աշակերտների գիշերօթիկ լինելու պատ-
ճառը երկար ճանապարհ գնալ զալու անյարմա-
րութիւնն է: Բայց ի գիշերօթիկները մօտ գիւղե-
րից կը լինեն նաև երթենելիներ, որոնց համար
աւելի արձակուրդ կարելի է նշանակել ամառը,
մինչեւ 4 ամիս, որպէս զի կարողանան ընտանե-
կան կեանքում օգնական լինել իրանց ծնողաց:
Ահա մի միտք, որ կարօտ է իրագործվելու: Ո՞վ
հայատէր է, ում սիրտը ճշմարտապէս ցաւում է
մեր գիւղական հասարակութեան տգէտ լինելու
վրա, ով սրտով սիրում է ազատել գիւղացուն նա-
խապաշարմունքից, թող իրագործի այդ միտքը,
Բայց այս գործում առաջին անգամ մեր հոգեո-
րականների միջամտութիւնը անհրաժեշտ ենք
համարում մենք, իսկ յետոյ գործին լաւ ընթացք
տալը երիտասարդների եռանդին է մնում:—
Մենք ցայց տուեցինք գործելու տեղը. այդ թող
համարի մեր բաժին օգնութիւնը մեր զրութե-
նում: Յս շարունակում եմ իմ ճանապարհու գետի
գույքն բզովանդի միջով: Այս գիւղից արգէն
տեսնալում են Դուինի այն աւերակները, ուր
երբեմն, ինչպէս պատմում է, Խորովադիտի
ապարանքն էր կանդնած, մի բլրի զլիխու: Յս
հետաքրքրութեանս բաւականութիւն տալու հա-
մար անձամբ բարձրացայ այդ բլրի գլուխը և
արդարև այնտեղ քարփիչների կոյսերը և տան
հիման տեղերը վկայ էին պատմութեան ճշմարիտ
լինելուն: Ընդհանրապէս “Դուինի շրջակայքը
հետազօտութեան արժանի տեղեր են և յիշեց-
նում են ամեն մի քայլափոխում մեր պատմա-
կան անցեալը: Մի քանի վերստ Դուինից ցած
գտնվում են ուրիշ աւերակներ. դրանք Ար-
տաշատի հետքերն են, որոնք ես բաղդ չունե-
ցայ տեսնելու: Դուինը հեռու չէ բզօվանդից: Նա
աւելապէս երկու է բաժանվում. գիւղի առուեց
ասքը ասօրու Դուին է ընկած, իսկ ցածր հայի
Դուինը: Քաղաքներում ամենաբարձր շինու-

